36. ԽՆԼԱՑԻ ԱՂՔԱՏ

Մարթըմ կէլնի. ուր կնիկ:

Մեյ թակ շապիկ ունեն: Մարթն կնգաւն կասի. - Ծապիկ տուր խայնեմ. կէրթամ չարշին փոամ:

Էլնվ ուր շապիկ խագյնվ. սև անթրոցըմ պոնեց ուր ծեռ. արաց ուր բաստոն. կնաց չարշիի մեչ: Կէրթա էն գյլեռխ. կուգյն էն գյլեռխ. գյեռ քյի բարացե վեր ուր շապկին. ինքյն ուր ասաց՝ էրթամ տուն: Խանեմ. թո իմ կնիկ խայնի:

Ասաց. - Կնի՛կ. տեղ չըս էրթա՞:

Ասաց. - Ապա կայնելու գյախ ի: Ծապիկ խանէ:

Կնիկ խագյավ. Էլնվ տյուս. կնանց իրեքյ տուռ թուիեց, էրկու իրեքյ խաց ուզեց տներաց. առեց, կնաց:

Ասաց. - Խացեր առնեմ. էրթամ տուն, իրիկուն ուտեմ:

Մարթն ի. գյէռ մտե թոներ: Խորանթը էր. Էլնվ կայնավ մեչ թոնրվան:

- Դե՛, - ասաց, - կնի՛կ. խաց պե. ուտենքյ:

Էլնվ ճրաքյ կպոց: Ճրուքյ կպուցին:

Ասաց. - Դե՛, շապիկ խան. կտորմ էլնեմ խաղամ:

Ծապիկ խանեց. իրիկ խագյավ. կնիկ ուր թալեց մեչ թորվան. բաշլայեց ծափ զանել. տանտանանա՛. մարթն կիաղա գուտ:

Աղորթ որ՝ կխաղա կշտափորիկ. չխաղա կարմրատիկ:

Մարթն աչըզ Էլնվ, շապիկ խանեց. իտուր ուր կնգանն: Լուսցավ վերեհտներ:

Կնիյն էր. Էլնվ տյուս. փանթմ փոաց ուր խամար. խաց հազրեց առտվան, ցերեյվան:

Ասաց. - Կնի՛կ, յանի մեր հան՞լ անուշ ի, թե՞ թաքավուրուն:

Ասաց. - Քյա մարթ. տյու ծու՞ռ ես. թակավոր ընչի՞ աչկ տա մե: Թակավոր ի, առատուն կոիվ կէլնի վերեն. բաթմիշ կէլնի. աստված որ մե տվե, թյու մարթու չտըվե:

Արև մտավ: Թակավոր ասաց ուր վանզրին. - Իլի՛, մե խատ էսա կիշեր քյաղաքյ պտտենքյ:

Դանվրեշի խալավ խսագյան. Էլնն փոալու: Ո՛ր փողան, ո՛ր մահլեն որ մտան. ամբողջ ժողովուրթ քյնուկ ի. իրիշկացին մահլի քյեռշեն ճրաքյ կեր: Կատ արին էտ կրակին գյանցին, խասան մո տուռ. գյուտ ծափի ծեն. ծեռնախաղ կխաղան, յա մաղանթ:

Թակավոր ասաց. - Վազի՛ր. ըստա պամ կա, քենք ախչիյ կխաղցուցեն. ի՞նչ կանեն:

Ասաց. - Մեյ խա տան պյուղոր ֆոանքյ, ուրիշ տոտ չկա՞, չէլնի էլնեն փախնեն:

Իրիշկացին. զն տուռ չկեր: Պստի տոտմ ի տփիցին: Կնիկ վազեվազ էկավ, տուռն իպնց:

Ասաց. - Վո՛յ. սետաշապիկ ի:

Ասաց. - Տեղրմ չկա՞. սհաթս էրկու մնանքյ. թողնենքյ էրթանքյ:

Կնիկ ասաց. - Դանվրեշներ. տեղ կա: Օյուր էլ կա. բարե խաց չկա:

Ասաց. - Մենքյ խաց չենքյ ուզե:

Ինգյավ դանվրեշներուց առճև. տարավ տուն: Քյար էպե էն դանվրեշի տակ իտիր. մեկ՝ էն դանվրեշի տակ:

Դավրեշ կիրիշկա տան թայբիր. մու-մուր:

- Է՛, - ասաց. - կնի՛կ. քյո ուրախութեն վեր ինչի՞ն ի՛: Քյե տղա-մղա չկա՞:

Ասաց. - Կա՛:

Ասաց. - Ապա յու՞ր է:

Ասաց. - Գյեռ թոներ:

Ասաց. - Ի՞նչխ՝ թոներ:

Ասաց. - Խա՛, գյեռ մեչ թորվան ի:

Կնիկ մտավ թոներ, շապիկ խանեց, խաղյուց իրկան. կնիկ մնաց մեչ թորվան. ինքյ էլավ տյուս:

Ասաց. - Քյո կնիկ ինչի չէլնե տյուս:

Ասաց. - Մայար տյու չտեսա՞ր ինչ էլավ:

Ասաց. - Չէ՛: Զն չեմ տիսե:

Ասաց. - Էսա շապիյ կտեսնա՞ս. որ վեր ծի եի. սընհաթով ի, սընհաթմ ես կխայնեմ, սհաթմ էլ իմ կնիյ կխայնի:

Կասի. - Զա՛նըմ, ծե ըսկի ի՞նչ կա. զաթի էտա մեկ շապիյն ի:

Ասաց. - Ապա էտա մեկ շապկի վերե՞ն ի ծեր ուրախութեն:

- Խա՛, աստված էն ի տվե մե:

Կասի. - Առատուն մենքյ դավրեշ ենքյ, էրթանքյ մո թակավուրուն ասենքյ, տյու կուգյա՞ս էնտեղ, կտոմ պան-ման տա քյե, պիրես:

Կասի. - Խա՛, ինչի՞ չեմ իգյն:

Կըլնեն. կէրթն, ինոնց տեղ կնստեն. թակավոր կասի վնզրին. - Քյո կենաց մեչ տյու ըսկնա ֆուկարա տիսե՞ր իր: Մեկ շապիկի վերեն ըսկոմ ուրախութեն էլնի:

Վնզիր կասի. - Թակա՛վոր. էտա շապկի տեր խնլիվոր շատ խելքով մարթ ի:

Առատուն մարթն էլավ կնանց մո թակավոր: Մեչ պնկին գյեռ կֆոա. կէրթն կուգյա. թակավոր փենջարից կանչեց:

Ասաց. - Աղքյա՛տ, արե:

Էլնվ կնանց. էօդի տոտ կայնավ, չգըշխնաս մտնի ներս:

- Արե՛, - ասաց, - սանրբաստ արե, մի՛ վնխենա:

Կնանց թակավուրուն թանմանդեմ էլնվ. ծեռներ իտիր վեր սոտին, կայնավ: Նստըցուց. կայնվես իտուր խմավ: Ուր խանզնանդարին կանչեց:

Ասաց. - Կնա մեյ թեփսի ոսկի հիլին լից. պրնձե փլավն էլ լից վերեն. խե քիչըմ խացի. ծեռքյըմ խալավ իսոր. ծեռքյըմ էլ կնգյանն. ա՛ռ շոտ արե:

Խազնադարն էլ կնաց ամփողջ ժոոլ՛ոց էկավ:

Խալիմոր ուր խալավ խագյավ. ուր ոսկին գյորկաց. խաց ու բեռիչեն. խալավ առեց. էլավ տյուս:

Թակավոր փենջարից կանչեց. ասաց. - Առատուն էլ ասրե:

Է՛ չկիտե ի՞նչ կաւ հինե. պտպտալեն կնանց, խազնադար էկավ ամանճ:

Ասաց. - Էտա փլավ չես ծախե՞:

Ասաց. - Զէ՛. չեմ ծախե: Թակավորական պան ի. իքյրամ արե. կտանեմ մեր տուն. ուտենքյ:

Խազնադար ասաց. - Տյու էրկու ջան էքյ, էտա ախաքին փլավ կտանես էնտեղ, չեքյ ուտե. կթթվի: Պե՛ տու զի. փարա կուտամ քյե:

Կտանի. կպիրի, էրկու ոսկի կուտա. ծեռնեն կառնի:

Ֆուկարեն կթողնի կուգյա ուր տուն:

Կնիյ թորվընից վիզ կէրկընցուցի տյուս:

Կասի. - Էլի. էսա խալավ թակավորն ի տվե: Էլի խագյի:

Էլավ խագյավ:

- Խինգ փարա չարաց մո զիկ իսոր խագյնել:

Իրիկն ասաց. - Ինչի՞. կնիկ:

- Մանդր ի, - ասաց. - իմ ջան տայիցուց: Իմ շապկի պանն բաշկա էր:

Էլան ուրենց խաց-մաց կերան. նստան, կնիյ մտածեց վեր ուր քիչըմ ասաց. - Ռիչըմ ծափ զաւր, ես էլնեմ խաղամ դէորըմ:

Էլավ կտոմ խաղաց, չէլավ. ասաց. - Էսա ծանդր ի:

Խանեց իթալ. ուր շապիկ խագյավ, խաղաց. ասաց. - Տիաւ՞ր ինչ խաղ կուտա:

Նստավ, ասաց. - Էլի՛ էնա պատիկ սեռիկ տուր զիկ:

Էլանվ սեռիկ իպեր իտուր իրկան ծեռ: Թորվան կուշտ փորեց, էրկու ոսկին իտիր յինե, խորեց թորվան կուշտ:

Հյնան՝ առատուն էլան վեր: Ֆուկարեն էլանվ կնաց. սանրբանստ էլանվ թակավորու կուշտ: Էլմ թեփսիմ ոսկի լցեց. փլավ իլից վերեն, իտուր ծեռ:

Խանզնանդանր էկավ անջև էլմ: Իրեքյ ոսկի կուտա, ծեռնեն կստնի: Ուր փանրեն կառնի կուգյա չարշին. ոսկին կուտան թեթև լխեֆըմ, պանրցըմ. մինդանրըմ կառնի: Կթանի վեր թիվին, յալա՛ տուն:

Թանեց տուն. փոեց. պանցն իտիր, ուր քյամակ իզանր պանրցին, ոտ իթանի վեր ոտին. թիյնավ:

Կնիկ տյոան էր, էկավ:

Իրիկ գյեռ ըսկուն թիկներ ի, ոտ թալե վեր ոտաց:

Կասի. - Մարթ, էսօր քյե ի՞նչ ի էլե, էտա պես էլեր ես:

Ասաց. - Աստված որ զի տվեր ի, վի՞րն ի տվե, որ ըսըսկնն չանեմ: Էսօր էլըմ թակավոր մեյ թեփսի հիլին փիլավ լցեց իտուր, խանզնանդանր էկավ իմ անճև, իրեքյ ոսկի իտուր, ձոնես առեց:

Կնիկն ասաց. - Ընչի՞. թակավորական փլավ էր, թո պիրեր, ուտենքյ:

- Կնիկ, հմեն հմեն քյառսուն փանրանի պանն էր: Իրեքյ ոսկի քի՞չ փանրա յի:

Էլանվ ուր էրկու ոսկին էլ իթանի վեր էն էրկու ոսկուն, էլանվ չորս: Ինոնց խաց պիրին. կերան:

Իրիկն ասաց. - Կնի՛կ. էսօր իմ ջան մեյ կտոր խաղ կուզի:

Ասաց. - Կուզի. էլի խաղա: Ես պիտի ասի, տյու ասիր: Շոտ ասողին ի. էլի խաղա:

Մարթն էլանվ կայնավ: Ասաց. - Կնի՛կ, էն թեթև խասղերացն ասա:

Էն գյմխ ինչ որ կթալի տռան էն պուճախ. կտուճկա վիրին պուճախ. իլե Ծամ շարիֆ. ըլեֆ ուրախութեն կանեն:

Մարթն ներացավ. նստավ. պառկան ըլնան, չուր առատուն, ըստրհա ուրենց տնից կվախենան. խազինա են խորե:

Կասի. - Կնի՛կ. մուղայ կաց. ես էրթամ մո թակավոր:

Էլնվ կնաց մո թակավոր. թամմնդեմ իլնվ թակավուրուն, կայնավ ըյիբարջա իրես ի տվե:

Թակավոր կայհվեմ իբյրամ արաց, կանչեց գյէնն ու խնզնդնրին:

Ասաց. - Կնա իմ տկի ծին. իմ թուր, իմ խալվըներ այե տանբյ էսա ֆուկարին, թող սանի էրթա:

Կընեն. կխեծուցեն ծին: Ֆուկարեն ի. ծին կբշի թեխ տուն:

Խնզնդնր կուգյա ինոն:

Ասաց. - Էտա ծին. խալվըներ, թուր չե՞ս ծախե:

Ասաց. - Ը՛մ ծախե:

Ասաց. - Ջա՛նըմ. ըյե խինգ ոսկի տամ. տու՛ր:

Ասաց. - Թակավորական պան ի. անկարե՛լի էի. չե՛մ ծախե:

Կբշի թեխ տուն ծին:

Կուգյա տռան ինոնճ կկայնի. տուռ կտփի, կնիյ կուգյա տուռ կպանա:

Կասի. - Էսա սհնթամ ի տուռ կտփեմ. ընչի տուռ չըս պանա:

Կասի. - Տհ թակավոր մարթմ ես, ի՞նչ պանն ունես խե զի, ես ֆուկարա կնիկ:

Կասի. - Տո կնիկ. էսա թակավորն ի տվե զիկ:

- Ջե՛մ ճանչնա, - կասի:

- Կայնի. որ ըսկոն ի. տանեմ. ծախեմ. - կասի:

Ծին խեծավ. բշեց Լկավ, խնզնդնր գյեռ կայնե դն:

Խինգյ ոսկին իտիր ծեռ. ծին ծեռնեն առեց, էլնվ կնաց տուն: Տուռ տփեց, կնիկն էկավ տուռ իպնց:

- Քյո իրի՞կն եմ, թե՞ չէ, - ասաց:

Կնիկն ասաց. - Ա՛կա իմ իրիկն ես, խո էն գյմխն էլ իմ իրիկ չէ՞ր:

Ասաց. - Վոյմ էն գյմխն էլ ես ըյո իրիկն է: Ջաթի ըյո աչք չպերե. որ ես ծի խեծնի:

Էլնվ խինգյ ոսկին էլ իթալ վեր էն չորսին. էլնվ ին ոսկի:

Էկավ նստավ վեր ուր մինդարին. փալ իտուր պարց:

Ասաց. - Բո՛զ կնիկ, կե՛ խմի, ըյե տոճիկ արա. էս տրիս:

Կերան, խման, պառկան, ըյնան: Առատուն թակավոր կանչեց ուր վնզրին, մեկ միջոց վերեն ընցեր ի:

Ասաց. - Մեկ էլի՛, մեր ըյաղաբյ ֆռանբյ, խեմ էն ախբյատ ի՞նչ հնալի յի:

Էլնն դնվրեշի խալավ խագյնն, վնզիր, թակավոր մնհլեբյ ֆռալով էկան էն տուն կնդնն: Տուռ տփիցին, մարթ էկավ տուռ իպնց:

Դնվրեշներ ասին. - Էսա տուն մենակ ճրաբյ կեր, տեղըմ չե՞բյ իտա. սհաթմ էրկու մնանբյ:

Ասաց. - Պարեով. խնզնր պնրեով, տեղ ունեմ, փա՛ոբ աստծու. ճյուր ունեմ, հնալն խաց չունեմ:

Առեց կնանց տուն: Դրմփիկ իթալ տկներ. նստըցուց:

Ասաց. - Ֆուկարա, էն ժամանակ, որ էրկու դավրեշ էկան ըստն. մին ըյե ասեց՝ արե մո թակավոր. որ տյհ կնանցիր՝ իսկի ըյե պնմ չը տվե՞ր ի:

- Տվե՛. - ասաց. - Աստված ուր տուն շեն պախի. էն յանճին անքամ որ կնացի. թեփսիս փլավ իլից, իտուր զիկ: Խազնանդար էկավ իմ անճև, ծախիցի հնոր էրկու ոսկր: Էն մեկէլ անքամին կնացի. էլմ փլավ լցեց թեփսին իտուր զիկ: Խանզնանդար էկավ իմ անճև. իրեքյ ոսկի իտուր առեց: Ցիտին տրուն, որ կնացի. ուր ծին, ուր թուր. ուր խալվներ իտուր զիկ, ես խեծա էկա, խանզնանդար էկավ իմ ներսանճև. ասաց՝ ծին կծախե՞ս: Ասի՝ չէ՛. չեմ ծախե. թսքավորն ի տվե: Ասաց՝ էտա ծին զի կպատկանի. քյե չպատկանե. տու՛. քյե խինգյ ոսկի կուտամ: Ծին քշեցի, էկա տուն. մեր տոտ տփեցի. մեր կնիկ էլանվ տուս, զի չի թող ես մտնի տուն՝ տյու իմ իրիկ չե՞ս: Ես էլ հնաստ արի. ծին պիրիցի տվիցի խազնադարին, խինգյ ոսկին առիցի: Էկա: Գյեռ սկր, որ չեքյ ասվատա:

Ուր ոսկիքյ կխանի. կտնի դանվրեշներաց առնև:

- Գյեռ էսաս եի: Ասպած ուր տուն շեն պախի, բոլ ի տվե:

Առատուն որ մենքյ էրթանքյ մո թակավոր. տյու կուգյա՞ս էնտեղ:

Կասի. - Խա՛. ինչի՞ չեմ իզյա:

Կէրթան, կնստեն ուրենց տեղ:

Կասի. - Վազիր, էսիկ իսկի զանտըմ չիսկե վեր մազին, իսկի զա չի:

Ֆուկարեն կմտնի ներս, թամանդեմ կընի թակավորուն, կկայնի դան:

Կասի. - Ֆուկարա, քյանց զի խերեաթ արող կա՞ մեչ աշխարին, թե՞ չէ՝ ե՞ս եմ:

Կասի. - Քյո քյամալ ի՞նչ ի: Էրկու թեփսի փլավ ես տվե ֆուկարիմ. շա՞տ պան ի: Ֆլան երկիր թակավորըմ կա. ինքյն մեռեր ի. լաճ նստե թակավորութեն կանի: Էսա մեկ տարի կա, ինչ կանդար հնոր ժողովուրթ կա. էրթացող. գյացող կա, ամեն օր, ավուծ գյլեռխ. կուգյանն հնոնց խացըն կուտեն, հնոնց ոսկի կտել. ոսկի թեփսին կտնեն հնոնց ծոց կէրթան: Էսակնա խերեաթ կանեն. քյոն էն ի՞նչ ի:

Կասի. - Տե՛, ֆուկարա. քյե կնստըցուցեմ իմ թախթ, որ սուրթ էլանվ. կուգյանմ քյե կտոր-կտոր կանեմ: Որ աղորթ էլանվ՝ իմ թակավորութեն քյե:

Վանզիր կասի. - Թող խանզնանդարի հաշիվն մնա, չուր էրթանքյ. գյանքյ:

- Դե՛, վանզիր, իլի՛ր վեր:

Էլանն ուրենց պատրաստութեն տեսան, հնոնց կոտեր թանլին հնոնց թիվքյեր. դանվրեշի խալավ խագյանն, տվին ճամբախ, կէրթան: Խարցուցելով, փտոելով, գյեղվեգյեղ կէրթան:

Կնանցին գյեղիմ թախիլ էլանն, հարուստ մարթում մնեն տեղ ուզեցին, տեղըմ տվիցին էտա դանվրեշներաց, նստըցուցին, խաց պիրիցին, կիրըցուցին, խըմցուցին, դանվրեշ էտա հարուստ մարթու մնեն խարցուց. ասաց. - Ֆլան երկիր ըսկնանն թակավորըմ կա, ըսկնա խերեաթ կանի. աղո՞րթ ի:

Կասի. - Խա՛, յերեկ չէ մեկէլ ես էնտեղեն էկա: Որ չեքյ ավատա, էրթանմ թեփսին էլ, կըտելն էլ պիրեմ ծե շանց տամ:

Կնանց ոսկի կտել, ոսկի թեփսին իպեր իտիր դավրեշի առաճ:

- Աղորթ ի, սուրթ չի:

- Մենքյ յյանի՞ օր կանանքյ խասնենք դան:

- Ըսկի, - ասաց, - որ կիշեր ըլնեքյ, կեսօրին կխասնեքյ:

Կես կիշեր կընեն դավրեշներ կինեն տուս, կէրթան. կխասնեն: Կիրիշկան, որ ըսկոն մախլուխ ի թաւփե էտա տուշտի մեչ, որ աստղին հեսաբ կա. ահալուն չկա: Էն դանվրեշներ կը նստեն էնտեղ: Հարքյաշ ուր խաց կուտի, կքյաշվեն: Ամ՝ մեկ ուր տեղ կէրթան. թակավոր գյեռ սանդալիեն թանլե նստե:

- Էն էրկու մարթ. - ասաց. - մեր խաց չկերած. վանգիր. մարթ էրողկի. թող էն էրկուսն էլ պիրեն:

Մարթ էրողկեցին. դավրեշներ առին, տարան: Նստան, մեյմեկէլի առճև խաց տրիցին ճիկճիկ. կերան. պրծան ուրենց խաց, մանխսուս էլան կայնան:

Թակավոր ասաց. - Էտա ծեր թեփսիքյ, կտելներ, վուրուցեքյ:

- Դե՛ վանգիր. - ասաց. - օր լմընցավ:

Դալալ իտուր կանչել, էսօր ի՞նչ ի, խերու էսօրվընն սկսեցի. լըմնցավ:

Ասաց. - Վանգիր, ի՞նչխ անենքյ, էտա խայու խանբար արդարացավ, մեր թակավորութեն մեր ծեռնեն կնանց:

Էտա դանվրեշ շատ խորոտ էր. թակավոր ասաց. - Ձես ի՞գյան մո գի, ամսականով քյե պոնեմ: Օր մեկ անքամ իլիր մինիրի գյլեռխ. բանգյ տու: Քյե ամիս խինգյ խաստիր կուտուշ էլ փանրն կուտամ: Քյո ընկյերոչ մնեն խարցում արա: Որ կուզի, թո էրթա. որ ինոր ջան չուզե. թո էն էլ մնա ըստան:

Ասաց. - Կմնամ:

Առատուն էլավ վեր դասվրեշ. լվանցվավ, ուր խացն կերավ, ուր չայն խմավ: Կեսավուր մոտն ի, ղանվրեշ կնանց էլավ մինիրի գյլեռխ. ծեռնըմ ուներ. գանգյկի պես. կանչեց մեկ խատ ուր ծեռով:

Թակավոր թե որ մեկ թիզ էր, էլանվ էրկու թիզ, էնչափ խպատտացավ: Ծապաթմ էրկու ըսկուն քնաց: Ավուր մեկին ասաց. - Վանգիր, մենքյ մեյ խատ իսոր ինոր խարցընենքյ, փտոտենքյ, խեմ աղո՞րթ էր. թե՞ սուր:

Վանգիր ասաց. - Կուզես խարցու. կուզես թող, համա աղորթ ի:

Դանվրեշնի. էլանվ ինգյանվ մեչ քյաղքյին. կխարցուցի, կփոտի, վիր որ խարցուց. խա՛, օղորթ ի, էսա պանն մեյ տարի եի խերենաթ կանի:

Թողեց. էկան: Ուր վախտն էկավ. էլանվ ուր մինիրի գյլեռխ, բանգյն իտուր, պրծավ, էլանվ կնաց մո թակավոր. նստան. կերան. խման:

Թակավոր վեր ուր դանվրեշին ուրախցավ, մէ մեկ ուր տեղ պառկավ, քյնավ:

Առատուն էլանվ վեր, լվանցվավ, չայն. կայհվեն խմավ. ուր վախտն էկավ. էլանվ կնանց մինիրի գյլեռխ, մեյ տիր բոռաց. իրիշկաց էնա էօդից ախչիյմ էլանվ տյուս: Պակի մեչեն մտավ մէկէլ էօդի մեչ:

Դանվրեշ տեսնելուն պես, վիրիվանց էկավ տակ մինիի գյլխուց, էսօր ես մեռե. թե էսա քսան օր:

Խանբար տվիցին թակավուրուն. լոխման հեքյիմ ուզեց թակավոր: Հեքյըմներ թանփան, դանվրեշի յարեքյ-մարեքյ դեղիցին, դանվրեշ պառկըցուցին ուր տեղ. դանվրեշ խանգյըստացավ կտոմ: Թակավոր կիշեր չում լոս չքյնավ:

Դանվրեշին ժրըցուցին, էլանվ ոտաց կֆոա: Թակավոր կանչեց դանվրեշին. նստըցուց, կայհվեմ իքյրամ արաց, խմավ:

- Է՛, - ասաց, - տյու ըսկնեմ օր ինչի՞ էն մինիրից չէր ինե տակ:

Ասաց. - Կուզե՞ս սաղն ասեմ քյե. թակավոր:

Ասաց. - Ես քյե կանչեր եմ, որ տյու դողրուն ասես:

Ասաց. - Էնա օդից ախչիկմ էլավ տյուս, պակի մեչեն քյեզեց, կնանց, մտավ էնա օդեն:

Թակավորն ասաց. - Էն ախչիկ շա՞տ խորոտ էր:

Ասաց. - Թակավոր. շա՛տ խորոտ ախչիկ էր:

- Տյու էն ախչիկ հապո՞վ ինգյանր տակ:

Ասաց. - Խա՛, իմ աչք ինգյանվ յինե, ինգա տակ:

Ասաց. - Դավրեշ. էն իմ ախչիկն ի: Որ կուզես. կուտամ քեզ:

Էլավ թակավորու ծեռ պաքեց. ախչիկն առեց: Խարսնիս կուտմիշ էլավ, փսակեց դավրեշին. խարսնիս ցրվավ: Ամեն մեկ ուր տեղ քյաշվավ. ցըվոտվավ: Ինոնքյ խասան ուրենց մուրազին:

Մեյ շապաթըմ ըսկուն միճոց ընցավ, ավուր մեկին. էլան ամբողջ էտա քյաղքյի միլաթ ամեն մարթ ուր չվան, ուր փետատ առեց. դավրիշն իրիշկաց. չուր թակավորու ծեռն էլ չվան փետատ կա:

Թակավոր ինգյավ ժողովուրթի առաճ. էլան կնացին. չուր թակավորն էլ խուրցըմ ցսխ ուր խամար քյաղեց. մեմեկ ուր ցախն շլկեց. պիրին էկան քյաղքյի պերան. մեյ մեկ ուր պեռ իտիր գյետին:

Դավրեշ իրիշկաց՝ ախագյի տեղմ իլեր ի:

Իտոնց մոտեն պամ չկարցավ խասկներ: Էլան մէ մեկ ուր տուն կնաց: Դավրեշն էլ էկավ ուր տուն:

Ասաց. - Կնի՛կ, մեյ կտոր խաց պեր ուտեմ:

Կնիկն էլավ վեր. խացն իպե, տրեց դավրեշի առաճ. ինքն էլ նստավ խետ դավրեշի կշտին, դավրեշը բաշլայեց խաց ուտել:

Էրկու պրտուճ կերավ, իրեքյին մնաց բողազ: Դավրեշ խացից քյաշվավ ետ:

Կնիյն ասաց. - Դավրեշ, տյու ընչի՞ խաց չկերար:

Ասաց. - Կնի՛կ, ես էսօր ծոիր եմ: Թակավորն էլ ցախ շլկի՞:

Ասաց. - Խա, ի՞նչ կա:

Ասաց. - Քյանց էն սևիրեսութեն պանն չկա:

Կնիկն ասաց դավրեշին. - Քյու խաց կե պոծի. քյե կպատմեմ:

Դավրեշ ուր խաց կերավ, պրծավ, կնիկն ճյուրն իպե, դավրեշ ուր ծեռ լվանց, էկավ նստավ:

Ասաց. - Կնի՛կ, դե՛. պատմի խենքյ:

Ասաց. - Դավրեշ, կիտե՞ս ի՛նչ հաշիվ ի:

Ասաց. - Չէ՛, չեմ կիտե:

Ասաց. - Դավրե՛շ, մեր երկրից էրկու մարթ էլան կնացին ուրիշ երկիրըմ: Էտա երկրի թակավոր պոնեց մեր մարթեր, գազյաղին լցեց վերեն վանեց: Որ կխարցուցես, էսա ցախն որ կպիրեն, կկոլոնեն. էն երկրից խենքյ ի՞նչ մարթ գյան, պոնեն թալեն յինե, ոո իմ խոր սիրտ խովնա:

Էտա դավրեշ կկանչի մեկէլ ընգըրոչ:

Ընգեր կուգյան, կնստեն, կնիկ կխանեն տյուս, կասի.

- Մենքյ էրկուան էլ դավրեշ ենքյ: Իսոր մարթեր իմ խերն ի վանե, էսօր չիմանա, առատուն, որ իմացավ, մե էլըմ կվանի, ի՞նչ կաչկի փեսա-մեսա: Մեր պատրաստութեն տեսնանքյ, փախենքյ:

Ասաց. - Տյու թակավոր ես, ես քյո վանզիր, ինչ որ ասես, պիտի քյո խանբարն անեմ:

Կանչիցին կնգյանն, կնիյն էկավ նստավ:

Ասաց. - Կնի՛կ, արե եմին արա, իրեքյ օր չասես: Իրեքյ օրուց սորա, որ քյո խեր քյե կկանչի. նոր ասա:

Կնիկն ասաց. - Դավրեշ, էտա ի՞նչ հաշիվ ի:

Ասաց. - Որ կխարցուցես, ֆլան երկրի թակավորն եմ, որ ծեր մարթեր էկան էնտեղ, իմ խեր իպե վանեց, մենքյ մկա պիտի էլենքյ, փախենքյ: Քյո խեր որ լսի անպատճառ պիտի մե վանի: Կնիկ, ես կիտեմ, տյու տղով ես, ա՛ռ էսա իմ

բազմանդ, թե որ ախչիյ կըլսի. ծախի՝ կիրեբյ. չուր տոդի տոդեն չր խլըսնի. թե որ լաճ կէլնի՝ կապի թև. թո գյմ, զի կընդնի: Ա՛հ. դե մնացիր պարի. մենքյ կէրթանքյ:

Դավրեշներ էլան. յալա. ճամբախ պըռնին. կէրթան: Կոնխե-կոնուխ խասան էնոնց տեղ:

Վանզիր ասաց. - Թակավո՛ր. տյու կայնի ըստեդ, ես էրթամ ներս. գյնամ:

Վանզիր մտավ սարեն, կնանց. որ աղբյատ գյեռ նստե ուր թախթ. թակավորութեն կանի. որ թոզ չթոնե, որ թափի վեր աճալուն:

Վանզիրն ասաց. - Ֆուկարա՛. մեր թակավորն էկավ. ես կիտեմ քյո խանբարն արդարացավ: Որ կուգյմ, իլի՛ կայնի ամոճև. թիվեն պոնի, թո գյա նստի ուր տեղ:

Կասի. - Վանզի՛ր, ես խետ ինոր պայման եմ արե, պանիս էկավ՝ թակավորութեն կուտա՛մ ինոր. պանիս չէկավ՝ ոնչ դա չեմ իտա: Կնա թակավոր առ՛ արե:

Վանզիրն էկավ, թակավորն առեց կնանց. մտան մեչ պանկին:

Ասաց. - Թակավո՛ր ապրած կենա. կիտե՞ս. մեր ֆուկարեն ի՞նչ կասեր:

Ասաց. - Չէ՛, ի՞նչ կասեր:

- Պայման եմ արե խետ ինոր, պանիս էկավ՝ կուտամ, պանիս չէկավ՝ չեմ իտա:

Ֆուկարեն իճանվ տակ, էկավ կնանց մտավ թակավուրու թև. թիվեն պոնեց տարավ նստըցուց ուր թախթ:

Ֆուկարեն ծեռ իտիր ուր արտին. կայնավ թակավուրու առաճ: Թակավոր հրաման արաց, ասաց. - Նստի՛:

Նստավ թակավոր, ուր մանջլիս կուտմիշ արաց:

Ասաց. - Վանզի՛ր, մե էստեղ քործ կա Ը՞: Պիտի մեր քործն կատարենք:

Վանզիրն ասաց. - Քյո հրաման ի. ինչխ քյո պանին կուգյա. ըսկոն անեմ:

Թակավոր հրաման արաց ուր էրկու մարթու՝ Քյելեքյ խազնադար կանչեքյ գյան:

Կնանցին խազնանդար առին էկան. պիրին թակավուրու իրես. թամանդեմ էլանվ թակավուրուն. կայնավ:

- Կանչեքյ, - ասաց, - էրկու խա ջալադ:

Մ'եյ կայնավ խազնանդարի էն կողմ, մեկ՝ էն կողմ:

Թակավոր ասաց. - Խազնանդար. էսա ֆուկարեն. որ կա. տյու լավ կճանչնա՞ս:

Ասաց. - Խա՛, կճանչնամ:

Ասաց. - Լավ թակավորութեն կանե՞ր:

Ասաց. - Ծատ լավ թակավորութեն կաներ:

- Տյու կիտեր էն մարթ ֆուկարա էր, շատ խելքով էր, տյու ասծուց չվանխեցա՞ր: Ես էն մարթ կանչի պիրի. ասի կնա մեյ թեփսի հիլին ոսկի լից, պրնձե փլավ լից վերեն, տվիցինքյ տարավ, ընչի՞ կնանցիր տիմանց, էրկու ոսկի տվիցիր. ծեռնեն առիցիր:

Խազնանդար շունչ կտրավ վերեն:

Ասաց. - Էրկու անգամ էլ իրեքյ ոսկի տվիր ես՝ ոսկիքյ ծեռնեն առիր ես: Իմ ծին, իմ խալվըներ, իմ թուր տվիցի էսա մարթուն, է. ընչի՞ կնանցիր խինգ ոսկի տվիցիր, մնեն առիր:

Խազնանդար ասաց. - Հրաման տուր, խանբար տամ:

Ասաց. - Քյե հրամա՛ն ի, ասա՛:

Ասաց. - Էն ոսկիյներ ես առիր եմ, պավսեր եմ, ծին էլ եմ առե պախե. թե էն մարթ էսա կանդար ոսկին ի՞նչ պիտի աներ: Օր կընի կոիվ կուգյան վեր քյե. կնեղվես, որ խանես, ծախսես:

Թակավոր ասաց. - Խազնադար. ես էն ոսկիքյ. էն ծին. որ տվի փուկուսրին. ծովուց կտել եմ. ճյուր պիտի պայսեր: Հայդե՛. ջնլնդնե՛ր. իսոր վիզ զանեքյ:

Խուազնադարի՝ վիզ զանիցին:

Ասաց. - Վազիր. էսա փուկուսրին մեկ խորոտ էօդեմ տանքյ. ինքյ ուր կնիյ նստեն յինե. ուտեն. խմեն. առավըտուն էլնի գյա. նստի իմ կուշտ, իրիկուն թոնի էրթա ուր տեղ պատկի. չյուր մեռնի: Վազիր. ի՞նչխ ի էսա խոսք:

Ասաց. - Էսա որ տյու ասիր. շա՞տ լավ խոսք ի:

Էնոնքյ թո մնան էնտեղ. մենքյ տառնանքյ վեր կնկան:

Ինն օր. ինն սնաթ կթըմմի, աստվուծութեն իտոր մեյ լաճ կուտա: Կշախի, կպուսխի էտուս տղեն. կնոճանա. թակավոր սանինթըմ չտիսնա. կպտքյի:

Ավուր մեկին. էտա լաճ կէլնի կէրթաս մեչ ճժերուց խաղալու. թակավորական տղա եի. ինոր կգնրկի. իսոր կգարկի. ճժերուց ճաներ, գյոզեր կխլի. չեն գըյմշնուս ծեն տան. մեկ հարուստիմ տղեն. կասի. - Տո՛ շան որդի. տյու կիտես մա տյու թակավրու տղե՞ն ես, տյու պիճ ես:

Կասի. - Տո՛ շուն շան որդի, ես թակավրու տղեն ըլնեմ. տյու զիկ ասես պի՞ճ:

Ասաց. - Տըսնընխինգյ տարի առաճ էրկու խատ դնվրեշ էկան ծեր տուն, քո մեր տվին ինոր. էլնվ փախավ կնաց. գյեռ տյու ինորմնեն ես: Պիճ ես, ապա ի՞նչ ես:

Լաճ վնզեվնզ կուգյա տուն, կը մտնի էօդեն:

Կասի. - Մարե՛. իլի՛ վեր: Իլի՛ կազանըմ ճյուր տայիցու. ես կլոդկընամ:

Կասի, թե. - Տյու էրեկ լոդկըցար:

Կասի. - Չէ՛. էսօր էլ կլոդկընամ:

Կասի. - Դե՛ տյու կնա ճյուր պե, ես էրթամ օջախ անեմ:

Լաճ կառնի գիգյումներ. կէրթա ճրյու: Մեր կէրթա օջախ կանի: Խորոտըմ ճյուր քյընփըռ-քյընփըռ կեռա:

Ծեռ կթալի մոր ծամեր կպռնի. կքյուշի վեր կազանին:

- Ցա՛ դոդրու կասես, յա՝ քյե կմլեմ մեչ էսա ճրին, կվառեմ:

Կասի. - Թռ՛դ. քյե կասեմ:

Մոր ծամեր կթոդնի, կըլնեն կուգյանն էօդեն կնստեն:

Կասի. - Դե՛, ասա:

- Քյե ի՞նչ ի էլե, որ ասեմ:

- Ֆլան հարուստի տղեն զիկ ասաց՝ տյու պիճ ես:

Ասաց. - Աղո՛րթ կասի:

Ասաց. - Ապա էսա թակավոր իմ խեր չի՞:

- Չէ՛. որդի, - կասի. - էն իմ խերն ի:

- Ապա իմ խեր վո՞վ ի:

- Քյո խեր դնվրե՛շ էր. էկավ զի առեց. վնխեցավ, փախավ կնանց:

Ասաց. - Որ ըսկոն ի, ես կէրթամ իմ խեր կընդնեմ:

Ասաց. - Վո՞վ կիտի. քյո խեր ո՞ր երկիրն ի: Կուրիսեր ի: Էրթանս. չե՛ս կանա կընդնե:

Լաճն ասաց. - Արե՛, եմին արա, քյո խոր չասես:

Ասաց. - Եմին կանեմ, իրեքյ օր չեմ ասե:

Լաճն էլնվ. ուր փետ պոնեց ծեռ. որ էրթա, մեր ասաց. - Տղա՛, կայնի:

Էլավ սանդղից բնգբանդ ինան. կապեց լաճու թև:

- Դե՛. կնա. - ասաց. - քյո խեր կընդի. որ կկնոնեա. զի չմոռնաս: Դե՛. կնա՝. աստված քե խետ:

Մեր լաճու իրիսներ պաքյեց, լաճ իտուր սար քյար. կէրթա՝, գյեռ: Իրեքյ օր թմըմավ. լաճ չէրևա:

Թակավոր կանչեց ախչկան. ասաց. - Ախչի՛. էսա տղեն դէ՞ր ի: Չէլնի՞ էս էլ ճամխեցիր խոր յիտև:

- Խա՛վլա. էն էլ կնա՝ խոր իտև:

- Տյու ընչի՞ զի իմաց չտվիր. ապա՛:

- Թողե՞ց ես իմ աչկեր պանե. քյե իմաց տե: Լաճ չէր էրթա, ավուր մեկին կնա՝ մեչ ճժերաց խաղաց, լաճու մեկն ասիր էր՝ տյու պիճ ես. էկավ ինքյանր արաց. թողեց կնա՝:

Թակավոր էլնվ ծիյավորներ էրողկեց յիտև լաճուն: Որտե՞ղ պիտի կընդնեն: Ճուացին, թողին. էկան:

Էտա լաճ ավուր մեկին նստավ վեր յանխարին. իրիշկաց՝ ծանդր բանզրգյանմ էկավ:

Ինքյ ուրն ասաց. - Ես պիտի չէրթանմ. չուր էսա բանզրգյանն գյան ընտեղ:

Բազրգյանն կնա՝. թանփանվ վեր անխարին: Լաճ անխարի վրանվուց էլնվ կտոմ էնտեխ նստավ:

Բազրգյանն էկավ վեր ախարին, ճյուր խման, էլնն էնտեխ նստան, խաց տրիցին. կանչեց լաճուն:

Ասաց. - Տղա՛, տյու որտեղացի. դէ՞ր կէրթանս:

Ասաց. - Ո՛նչ խեր ունեմ. ո՛նչ մեր ունեմ:

- Է՛, - ասաց, - արե՛, իլի զի լաճ:

Ասաց. - Աղե՛կ, կլնեմ քյե լաճ:

- Իլեքյ, - ասաց, - էնա մեկ պեռ ծին տարտկեքյ վեր մե մեկի, անյանրըմ տրեքյ վերեն. լաճու խամար պատրաստեքյ:

Թուջար էլնվ պարցեց. քշեն գյեռ ճանմբանխ:

Ոչխար տիսնա, կէրթա՝ խովվուն խարցուցի էտա լաճ. - Էսա ո՞ր երկրի ոչխարն ի:

- Ֆլան երկրին ի:

Քշեց գնա՝ց, խասավ ուր խոր խողի մեչ, բանզրգյանն դա՝ թանփեց: Նստան, կերան. խման, առատուն էլան պանրցին:

Մեկ, էրկու, իրեքյ սանանթ էլ ճամբախ կնա՝ցին, իրիշկաց գյեռ կտիրըմ ուղտ գյեռ կարաձա:

Լաճն ուր ծին քյշեց. գնա՝ց մեչ էտա ըղտերաց:

Մարթմ էկավ մոտ: Ասաց. - Էսա ըղտեր վի՞րն են:

- Էսա ըղտեր թակավուրուն են:

Ասաց. - Լա՛վ, թակավուրուն են. թակավուրու՛ն են:

Էլնվ, իթող, էկավ մո բազրգյան: Ուր պեռներ էտա չիման թանփեց, ծիանքյ շիթկիցին արոտ, էկան նստան:

Խաց տրիցին, որ խաց ուռեն. լաճ խոովավ:

Բանզրգյան կանչեց լաճուն, ասաց. - Տղա՛, արե՛ խաց կե, որ էլնենքյ պառնանքյ:

- Լազըմ չի՛, - ասաց, - քյո խաց, էսա մեկ ամիս ի մենքյ ճամբախ կուգյանք. տյու մեկ օր չես ասե էսա լաճու չամաշոր լվանլ տամ, փոխել տամ: Լազըմ չի՛, ես էլ չեմ էլնե քյե լաճ:

Հազրգյան վերուց ասաց. - Խալխի տղեն հեչ կէլնի՞ մարթու տղա: Թո՛ղ կնա. ասսվաձ խե ջյե էլնի:

Լաճ թողեց. կնաց մտավ մեչ խոր ջյաղջին:

Ինգյե մանիլեջ կֆոա գյեռ: Իսկի չգիտե դո՞ր էրթա: Մեյ խատ էլ իրիշկաց դուռնիմ վրեն. խարիր կընի. խարիր կմտնի: Ժողովուրթ թափեր ի. էլավ. կնաց էտատեղ:

Իրիշկաց մեկն խարիսա կտանի, որն հալվա կտանի. մէ մեկ առեց ուր փայ կնաց:

Լաճ կայնավ էտա դուռնի առաճ: Հալվաջին էլավ տյուս:

Ասաց. - Տղա՛. ընչի՞ ես կայնե էտա տեղ:

Ասաց. - Վալա կարիբ եմ. չե՛մ կիտե դո՞ր էրթամ:

Լաճու ծեռ պոնեց. տարավ ներս. կուշտ հալվա կիրըցուց:

Ասաց. - Դէ՛ էլի. էրթանք մեր տուն:

Ասաց. - Կընի՛կ. էսօր տղեմ եմ կընդե պերե:

Կնիկ իրիշկաց՝ կոջա երիտասարթմ ի. չուտես, չխմես. իրեսն իրիշկես:

Ասաց. - Անենք մե լաճ:

Ասաց. - Խա՛. կընեմ ծե լաճ:

Էլավ աղոթրան դեռ չէր պացվե. կնացին ինոնց խանութի մեչ, բաշլայեցին ինոնց հալվա զարկել. խարիսեն իփել: Ահալին էկավ. մէ մեկ հալվեն տարավ: Ամեն մեկ ջյաշվավ. կնաց:

Իրիշկաց՝ վանզրի ախչկան խալայեղ էկավ, ասաց. - Հալվաջի՛. էսօր հալվեն ինչի՞ յսգյնացեր ի:

Ասաց. - Կտոմ կայնի. պատրաստեմ, տա՛ր:

Լաճ մաղազից էլավ տյուս: Ինչ որ խալայեղ իրիշկաց թեխ տա լաճ. խելքյ կնաց ինգանվ էտա տեղ: Ճյուր տփիցին իրես. խելք էկավ գյլեռխ, էլավ վանզեվանզ էտա խալայեղ կնաց, կնաց վանզրի ախչկան մոտ:

Ասաց. - Ախչի՛. մեր հալվաջուն լաճմ կա. ընկուն երիտասարթ իսկի տեղ չկա: Հալվեն էլ չպիրիցի, մու թողի՛ր եմ, էկեր եմ: - Դե՛, էլի, - ասաց, - շոտ կնա մո հալվաջին, թող հալվաջին, ուր լաճ. խե հալվին գյանն ընդան:

Խալայեղն էկավ, ասաց. - Հալվաջի՛, շոտ արա:

Ասաց. - Հալվեն զյեռ, ա՛ռ կնան:

- Զէ՛, - կասի. - ես չեմ տանե:

Կասի. - Ընչի՞ չի տանե:

- Տյու առ խե ջյո լաճուն էրթանք:

Էլանն հալվեն տվին խալայեղի ծեռ. ինոնց վերանգյլեռխ փոխիցին, խանութ կոծին, էլանն ինկյան խալայեղի իտև. կնանցին վանզիրի տուն:

Վանզրի ախչիկ էօդից էճանվ տակ, էկավ:

Ասաց. - Հալվաջի՛, էսա տղեն վի՞րն ի:

Ասաց. - Իմն ի. վի՞րն ի:

- Քյոն չի՛, - ասաց:

Ասաց. - Իմ տղեն զոռով տը խլես զէզնե:

Ասաց. - Խա՛, կխլեմ, իսկի ճար չկա: Արե՛ էրթանք էսա լաճու կշռանքյով ոսկի տամ ջյե. ա՛ռ կնան. լաճ թո կէնես զի:

Հայբեմ իլին ոսկի իլից, իտուր հալվաջու ծեռ՝ դե՛ կնան. ասաց:

Լաճու թև պոնեց, տարավ էօդեն. սեղան կուտմիշ արաց. կերակուլ տրեց, թանան-թանան արաղներ էկավ, էն կխմի՝ կուտա ինոր, էն կխմի՝ կուտա ինոր:

Կերան. խման. պոծան:

Էլան յան էկան մեչ կառնոլին: Օրն էկավ կեսօր: Հնլն չեն ըլնե վեր. որ:

Խալայեղն էկավ. խանեց վեր ինոնց: Խալըվներ խագյուց. լվնցվան, էկան նստան:

Վնզրի ախչիկ ասաց. - Ջա՛նըմ. ես սեկ օր քյե պախեմ. էրկու՛ օր քյե պախեմ. չէլնե: Իլի առ էսա խնզար կամ էրկու խազար ոսկին. կնն ֆլան քյեռշեն տնոտակ խանութըմ կա, էնտեղ պոնի. մալ պնն լից. ա՛ռ-տուր արա: Իրիկուն որ կմթնի. արե՛:

Ուր խանութ պոնեց. մալեր իլից յինե: Թազն խանութ ի, գյեռ բաշլայեց մուշթարի թաքյ-թաքյ կուգյան. ուր կշտի ասնըֆներ գյուզ բազմեն որ տան խարիր փուրա, էն կուտա հիսուն փնարա: Ժողովուրդ թնփան վերեն, առուտուրից գյելոխ չկանա վերուցի: Ասնֆն էլավ ժողվըռտվավ. էկան վեր լաճու խանութին:

- Մենքյ կնբյուլ չենքյ անե ըսկնն:

- Ընչի՞ կնբյուլ չեքյ անե:

- Տու էկար էստեղ խանութ պանցիցիր. մեր խաց կտրավ:

Ասաց. - Տյուքյ կնբյուլ չեքյ անե, վիրին ճուղաց, ես զոռով մուշտարին քյաշի՞ր եմ:

- Կէրթանքյ, կպողոքենքյ վեր քյե:

- Քյնանգյ մըկա, շոտ չկա, ես ծեր թակավրուց չեմ վնխենա:

Ասնաֆ ուր գյլեռխ կկոռի. մե մեկ կէրթն ուր դյուքյան կնստի:

Լաճն ի. գյեռ ուր դյուքյան նստեր ի. արև մտավ: Ցանգյընցավ վեր լաճուն. էլնվ ուր կա չընկա ժողվըռտեց իրար, դյուքյան կոծեց, հըմեն քյեռշեն մեյ խալայեղ տրեր ի վազրի ախչիկ, ժողվըռտվան. մեյտրաւ կնանցին:

Էն գյնխ գյեռ էլմ կուտեն. կխմեն:

Ասաց. - Էսա չէլնվ, բոշ պնն ի: Կանչեմ Քյանքյան Փանոս. Կրմզի Գյելոն. Իսաջնն:

Կանչեց էտա իրիքյին. ասաց. - Ի՞նչ տամ ծե. էսա մեր պնկի տոնեն ծակեքյ ֆլան դուկնի մեջ խանեքյ տյուս:

Ասաց. - Գյնզով ի, քյնանի գյնզ որ էլավ. մեր հաշիվ կիտենքյ:

Ախչիյն ասաց. - Ուսթա. քյանի՞ օր կանեքյ ծակեքյ չուր դն:

- Տաս օր, - ասաց, - հազիվ ծակենքյ:

- Չէլա՛վ. - ասաց:

Մեյ քյանքյան էլ էկավ:

- Տյու քանի՞ օր, - ասաց, - կանաս ծակես:

Ասաց. - Խինգյ օր ծակեմ:

Ասաց. - Ծա՛տ ի, խինգյ օր:

Էն մեկել քյանքյան էկավ:

Ասաց. - Տյու քյանի՞ օր կանաս ծակես:

Ասաց. - Որ խոլ քյնշող էլնի. էրկու օր դնմ կծակեմ:

Ասաց. - Չի քյառսուն խա բեալնմն կա, տյու ծակի. թո ինոնքյ քյնշեն:

Քյանքյան ինգնվ պնն: Էն ծակեց. ախչկներ քյաշիցին: Ծակեց, տարավ դուռնից խանեց տյուս: Պոծավ. ուր իրավունքյն ատեց. հիրիկուն կնանց ուր տուն:

Էլնվ աղոթրնին լաճն ուր ֆնանր պոնեց ուր ծեռ. լդամի մեչեն էլնվ կնանց ուր դռնին մեչ: Ուր դռքյան էպաց, նստավ: Ուր առտուր կանի:

Թակավորն ասաց. - Վազի՛ր. էլի մէ խատ էսօր մեր ջյաղաքյ պտոտենքյ:

Արև մտավ. ֆռալով որ տեղ իրիշկիցին. ճրայքյ չտեսան, էտա լաճու դռունի մեչ ճրաքյ կա:

Էկան դռունի դառաբեն տփիցին. լաճն էլավ դառաբեն վիրուց. իրիշկաց՝ էրկու խա ղավրեշ գյեռ կայնած խանութի տուռ:

Դավրեշն ասաց. - Կտոմ կթողնե՞ս գյանքյ քյռ խանութի մեչ նստենքյ:

Ասաց. - Խա՛, էկեքյ:

Դավրեշներ կնացին նստան. կիրիշկան՝ դյուքյան հիլին ապրանք յի, ինչ ասես մեչն ի:

Դավրեշն ասաց. - Տյու իսա երկրացի չես նմանե:

Ասաց. - Չէ՛, ես էսա երկրացի եմ:

- Ապա տյու չուր մկա ընչի՞ ես մնացե խանութ. սանանթ խինգ կուգյան:

Ասաց. - Չի տուն չկա՛, ես էսատեղ կը քյնեմ:

Ասաց. - Դե՛ տյու կիտես:

Հալվաջին որ օր գյլեռխմ հալվա կպիրի, չի կիրե հալան լաճ, իպե իտիր դավրեշներաց ռնաճ, գյեռ կուտեն, իրիշկաց՝ մեկն տկանց դառաբեն իզանր:

Կզվավ վերեն լաճ. ասաց.

- Կընան, էսօր մսանֆըր ունեմ, չե՛մ կանա գյան:

Խալայեղ կնանց, վանզրի ախչկան ասաց. - Կասի՝ էսօր մսանֆըր ունեմ, չեմ իգյան:

- Զէլան՛վ, - կասի, - կնան ասա. թո գյան, մսանֆըրն էլ խետ ուր թո պիրի:

Էկավ դառաբեն իզանր էլմ, լաճ կզվավ ասաց.

- Ջանըմ, էսօր չէլնե, մսանֆըր ունեմ:

Դանվրեշներն էնտեղ իրիշկացին մեյ մեկու իրես:

Ասաց. - Կասի՛, թո առնի մսանֆըրներն էլ խետ ուր գյան:

Էլավ դառաբեն վերուց, ֆանանր կպուց, մտան մեչ լաղմի, դանվրեշներն էլ գյեռ իտև կէրթան:

Թակավոր ասաց. - Վանզիր, տե՛, էսա լաճ մե տեղ ըմ կտանի, կամ ք՛ու կոնախ կէլնի, կամ ի՛մ կոնախ կէլնի:

Ախր է մե էսա լաղմից պիտի խանի տյուս: Ծեն չի տաս, չուր առավոտ, մենքյ կիտենքյ, մեր հաշիվ:

Կասի. - Չէ՛, ինչի՞ պիտի ծեն տամ:

Կնացին, վանզրի պանկից էլանն տյուս:

Վանզիր մե խատ իրիշկաց. ուր էօդեքյ. ուր դանրբանր: Պիտի բոռեր, թակավոր ծեռ ճխթեց վեր պերնին:

Վանզրի ախչիկ վիրիվանց էճալվ տակ, առեց էլանվ վեր, ամր արաց բեալամեյքյտերանց:

Ասաց. - Էտա մսանֆըրներ խորոտ պախյեքյ, տեղըմ քյնըցուցեք:

Վանզիր ինանն թակավոր կնանցին նստան էօդեմ: Խաց, կերակուլ պիրին կիրըցուցին, իտոնց յաթաղ թալիցին, պառկըցուցին:

Ախչիկ-լաճ պառկած քյնած զաթի:

Վանզիր կասի. - Թակավոր, տունն որ կա՝ իմ, ախչիկ որ կա՝ ի՛մ, ես գյանխն ի պասոռեմ: Որ տյու ըլներ, կանե՞ր համպերեր:

Թակավոր կասի. - Վանզի՛ր, քյռ սիրտ լեվացկ արա, առատուն ինոր դատ կկտրեմ:

Աղոթքնին լաճ էլավ վեր. ֆանսր կպուց. առեց դսվրեշներ. մտան լսղմի մեչ. խանութ էլան տյուս: Դսվրեշներ խանեց. ճնմխեց:

Դնվրեշներ կնացին նստան ինոնց տեղ: Լաճ բաշլայեց ուր սառուտուր անել. ջովստրմ զսվթիա էկան իտև. - Պարև. աստծու պարին:

- Խեր ըլնի. - ասաց. - ի՞նչ բնս ի:

Ասաց. - Խե՛ր ի, իլի՛ էրթանքյ. թակավոր քյե կկանչի:

Ասաց. - Թակավոր ընչի՞ զի պիտի ուզի: Ես ամեն օր խաց սո՞խ եմ կիրե խետ թակսվորին:

Զավթիեքյտերաց քշեց:

Զավթիեքյ կնացին թակավրուն ասին. - Տյու չես թակավոր. թակավոր Է՛ն ի, մը մլեց տյուս:

- Իլե՛քյ չորս խոգյի կնացեքյ, տփելով. զոռով. կապեքյ, պիրեքյ:

Էլան չորս խատ զսվթիա էկան լաճուն վերեն:

Ասաց. - Հա՛. հա՛, իլի վեր. թակավոր քյե կուզի:

Էլնվ խանութ կոծեց. ինգյնվ ծոճրվներ. կնանց մո թակավոր: Թակավոր ուր մաջլիս կուոմիշ արեր էր:

Լաճ կայնավ թակավրու իրես:

Ասաց. - Թակավոր ապրած կէնաս, ամր տու՛ զրհուցեմ:

Կասի. - Հրամա՛ն ի. խանբնր տու:

Կասի. - Ես քյանի մարթ եմ սպանե սոխախներ, որ զիկ զոռով առին պիրին: Հանցանքմ արի՞ր եմ:

Կասի. - Քյո արածն շատ ի: Էտա ջնլնդներ կտիսնա՞ս, քյո վիզ կզարկեն:

Կասի. - Ես մնոնխ չեմ անե. թո տերն մնոնխ անի:

Կասի. - Էսա կիշեր իսկի դնվրեշ էկա՞ծ ի քյո խանութի մեչ:

Կասի. - Խա՛, էրկու խա դնվրեշ էկան:

Կասի. - Հալվա կիրսւ՞ծ ի:

Կասի. - Խա՛, հալվա էլ կերան:

Կասի. - Ապա տյու ի՞նչխ կասես հանցանք չկա զի, - կասի, - քյո վիզ կզարկեմ:

Կասի. - Թո տե՛ր մնոնխ անի:

Կասի. - Ճնանր կպուցի՞ր ես: Էն դնվրեշներ խե քյե առե՞ր ես, իկիր իս: Ո՞րտեղեն ես իլե տյուս. չեմ կիտե: Էտա դնվրեշներ էկան զի պողոքեցին: Մկա ի՞նչ կասես:

Կասի. - Զա չէ, էն ի՞նչ պիտի ասեմ:

Կասի. - Տյու իկիր ես վնզրի կոնախ: Քյո վիզ կզնրկեմ: Դե՛ ջալադներ:

Տղեն բնզբնանդ ուր թիվեն կարցկի, կկքյի իրար, կզնրկի մեչ թակավորի սրտին:

- Կանչի, թո իսոր տերն մնոնխ անի, ես ի՞նչ պիտի անեմ:

Թակավոր բնզբնանդ կառնի. կիրիշկա վրեն:

Կասի. - Վնզիր, էսա բնզբնանդ վի՞րն ի:

Կասի. - Քյոն ի:

Կասի. - Վնզիր, որ իմն ի, էսա լաճն էլ իմն ի: Էսա էկավ մե կնդավ, - ասաց, - բուղեն էլ տնե եի. էրինջն էլ տնե եի. մնոնխ մի անե:

Էլնն կնանցին բաշլային ինոնց խարսնիս. յոթ օր, յոթ կիշեր զնրկին, խաղցին:

Ինոնք խասան ինոնց մրազին: Տյուքյ էլ՝ ծեր: